ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 13 >> Մարտի 2015թ. N 20

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.17-րդ կետիի <<ա>> ենթակետով և հիմք ընդունելով Գագիկ Հարությունյանի դիմումը, <<Քեվորք և Անիթա Փակումեանների հիշատակի <<Հիսուսի մանուկներ>> առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունում ընդունման-հանձնման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ա. Մարտիրոսյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 3 աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հանձնաժողովին (Ա. Մարտիրոսյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել <<Քեվորք և Անիթա Փակումեանների հիշատակի <<Հիսուսի մանուկներ>> առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հայրիկ Սարգսյանին, ընկերության տնօրեն Գագիկ Հարությունյանին և նույն ընկերության գլխավոր հաշվապահ Վերա Միքայելյանին (համաձայնությամբ):
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2015 թվականի մարտի 13-ի
N 20 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Մարտիրոսյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ.

Անդամներ՝

Ծ. Գրիգորյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**